Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ **Աշակերտների առաջադիմության բարձրացումը համագործակցային ուսուցման միջոցով**

Կազմեց՝ **Լուսինե Սարդարյան**

(անուն ազգանուն)

Օխտարի միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

՝Կապանի N 2 ավագ դպրոց՝ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Նախաբան----------էջ 2-4

Գրականության ակնարկ----------էջ 5-7

Գործնական համատեքստ----------էջ 8-9

Հետազոտության ընթացք----------էջ 10-12

Տվյալների մշակում և վերլուծություն----------էջ 13-15

Ամփոփում----------էջ 16

Գրականության ցանկ----------էջ 17

Նախաբան

Այն, ինչը հարկադրված եք եղել ինքներդ հայտնաբերել, թողնում է ձեր մտքի մեջ մի շավիղ, որից կրկին կկարողանաք օգտվել, եթե դրա անհրաժեշտությունը առաջանա:

Լիխթենբերգ, գերմանացի ֆիզիկոս, 8-րդ դար

Դասավանդումը ոչ միայն արվեստ է, այլ նաև արհեստ, և ինչպես յուրաքանչյուր արհեստ, ունի իր հնարքներն ու հնարամտությունները, եղանակներն ու մեթոդները: Դասի որակի բարելավումն իրականացվում է ուսուցման ձևերի, մեթոդների, հնարների կատարելագործման, կրթական տեխնոլոգիաների միջոցով:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներից ճիշտ օգտվելու կարողությունն է: Նա պետք է խուսափի գիտելիքների ձեռքբերման անարդյունավետ ճանապարհներից և օգտագործի առավել արդյունավետ եղանակների առավելությունը: Իսկ դրա համար նպատակահարմար է, որ ուսուցիչը ծանոթ լինի, թե ինչպես է ընթանում ուսումնական գործընթացը, կատարի եզրահանգումներ՝ հիմնված իր անձնական փորձի վրա:

Գյուղական դպրոցներում ընդհանրապես, և այն կրթօջախում մասնավորապես, որտեղ ես եմ դասավանդում, սովորողների թիվը քիչ է, և

ուսումնական պարապմունքներն ընթանում են հիմնականում ուսուցման անհատական կազմակերպման միջոցով:

Ուսուցման անհատական ձևի առավելությունն այն է, որ սովորողները մշտապես գտնվում են իմ ուշադրության ներքո, որ նրանց հետ տանում եմ անհատականացված աշխատանք և հետևում նրանց կարողունակությունների զարգացմանը, սակայն իմ գործառույթները սահմանափակվում են աշակերտին տրվող հանձնարարություններով և դրանց ստուգումով, ինչը հնարավորություն չի տալիս ինտերակտիվ մեթոդներ կիրառելու: Թերություններից մեկն էլ այն է, որ թույլ սովորողները երբեմն բարդույթավորվում են, մեկուսանում, ցուցաբերում անհամարձակություն ու պասիվություն՝ խուսափելով մրցակցությունից, վախ ունենալով անհեթեթ կամ սխալ արտահայտվելուց:

Ելնելով այս իրողությունից՝ որոշեցի մեկնարկել համագործակցային ուսուցման պարապմունքներ՝ խմբի հաստատուն կազմով: Կարծում եմ՝ համագործակցային ուսուցումը դուրս կբերի սովորողներին *պարտադրված մրցավազքի հորձանուտից, հնարավորություն կտա մասնակցել ընդհանուր*

նպատակների իրականացման գործընթացին՝ կարևորելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները միավորման և թիմային աշխատանքների տեսանկյունից: [1]

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: *Ժամանակակից աշխարհը դիտարկում է կրթությունը՝ որպես քաղաքական, տնտեսական, ազգային, կրոնական հակասությունների մեղմման միջոց՝ ընդլայնելով մարդկանց և խմբերի միջև երկխոսության հնարավորությունը: Հետևաբար, հանրակրթության կարևոր նպատակներից պետք է դիտարկել համագործակցության պատրաստ անձի ձևավորումը: Այժմ աշխատաշուկայում ևս կարևորվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ հաղորդակցվելու, համագործակցելու, նոր իրավիճակներում կողմնորոշվելու հմտությունները:* [2] Իսկ վերջիններս համագործակցային ուսուցման առանցքն են: Կրթությունը պետք է համահունչ լինի կյանքին:

---

[1] Բաղդասարյան Ա.: Մանկավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 2, 2017 թ., էջ 39-40

[2] Կարինե Բաբայան: Մանակավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 1, 2016թ., էջ 48-50

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- խթանել սովորողների ակտիվությունը և առաջադիմությունը
- ներգրավել դասին թույլ սովորողներին
- ձևավորել միջանձնային հարաբերությունների մշակույթ
- ուսուցման գործընթացը դարձնել առավել ակտիվ ու հետաքրքիր
- նպաստել կրթության որակին

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական գրականություն
- ուսումնասիրել համագործակցային դասեր պլանավորելու մեթոդական սկզբունքները
- ապահովել նպաստավոր միջավայր՝ գիտելիքներն ու կարողունակությունները դրսևորելու համար
- խթանել սովորել սովորեցնելու կարողունակությունը
- գրանցել առաջադիմության շարժը
- դիտարկել համագործակցային դասերը՝ նշելով առավելություններն ու թերությունները:

Հետազոտության վերջնարդյունքում ակնկալում եմ ստանալ հետևյալ հարցերի պատասխանները՝

- ուսուցման նմանօրինակ մեթոդի կիրառմամբ կհաջողվի՞ հետաքրքրասիրություն առաջացնել ընթերցանության, գրքի, ուսումնասիրվող նյութի նկատմամբ,
- ինչպե՞ս իրենց կդրսևորեն թույլ աշակերտները,
- դասի ընթացքում կհաջողվի՞ ձևավորել վստահության և համագործակցային հարաբերություններ թիմի անդամների միջև,
- դասը կհասնի՞ իր տրամաբանական ավարտին:

Գրականության ակնարկ

Համատեղ ուսուցումը հիմնված է այն գաղափարի վրա,որ սովորելը սոցիալական գործողություն է, որի ընթացքում մասնակիցները խոսում են միմյանց հետ:

Գերլախ

Դեռևս հնագույն ժամանակներում Արիստոտելը ընկերություն անելը սահմանել է որպես՝զգացողություն մեկ ուրիշ անձի հանդեպ, ցանկանալով նրան որքան հնարավոր է լավ բաներ:՝[3]

Համագործակցային ուսուցման ուսումնառության արմատները հասնում են 19-րդ դարի ամերիկյան փիլիսոփա **Ջոն Դյուիի** աշխատություններին: Դյուին իր **՝Դպրոցը և հասարակությունը՝** աշխատության մեջ առանձնացրել է կրթության հետևյալ սկզբունքները՝

- **ուսուցումը և գիտելիքների յուրացումը պետք է իրականացվեն ակտիվ և ոչ թե պասիվ հենքի վրա,**
- **դպրոցի ղեկավարման և նրա ամենօրյա աշխատանքներում պետք է կիրառել ժողովրդավարական սկզբունքները,**
- **սովորողների հետազոտական ազատությունը ուսուցման մեթոդիկայի կարևոր տարր է:**

Ժամանակակից կրթական համակարգում սովորողն իր պահանջմունքներով, հետաքրքրություններով կրթական գործընթացի ակտիվ մասնակիցն է: Համագործակցային ուսուցումը այն ձևն ու միջոցն է, որի շնորհիվ ուսուցման գործընթացը համահունչ է ժողովրդավարական հասարակության արժեքներին, որի շնորհիվ հնարավոր է դաստիարակել հարգանք մարդկանց ընդունակությունների և տարբերությունների նկատմամբ: Եթե նոր տեխնոլոգիաների մուտքը կրթական համակարգ չզուգակցվի համագործակցային ուսուցման ներդրմամբ, ապա նոր տեխնոլոգիաները կարող են պարարտ հող ստեղծել մարդկանց մեկուսացման և դրա հետևանքով անհատապաշտական հասարակության ձևավորման համար: [4]

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, 5 – ն են՝

- ✓ **դրական փոխկախվածություն**
- ✓ **անհատական հաշվետվություն և պատասխանատվություն**
- ✓ **միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ**
- ✓ **խմբային գործընթացի մշակում**

---

[3] Միլիտոսյան Լ., Պիպոյան Ս., Պետրոսյան Հ.,Կիրակոսյան Գ./ Թովմասյան Տ., Մասնագիտական մանկավարժություն, Երևան, 2007 թ.

[4] Բաղդասարյան Ա.: Մանկավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 2, 2017 թ., էջ 39-40

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս 1-ը: Պասի Սահլբերգը **փոխներգործուն /ինտերակտիվ / առաջադրանքները** դիտարկում է որպես համագործակցային ուսուցման **6-րդ տարր**:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները:[5]

Համագործակցային ուսուցումը հիմնված է մի շարք արժեքների և հիմքերի վրա.

- Ակադեմիական կատարողականի բարձրացում. սա ձեռք է բերվում խմբի տարբեր անդամների օգնությամբ, հիմնվում է օգնության և փոխօգնության վրա:
- Խմբային աշխատանք. սովորողը ավելի շատ բան է սովորում խմբում աշխատելով, քան անհատապես:
- Միջանձնային հարաբերությունների ձևավորում. այս հարաբերությունները ծառայում են որպես ուսուցման նոր եղանակների հիմք կամ ծագում:
- Սոցիալականացում և ինտեգրում. համագործակցային ուսուցումը սոցիալականացման և ինտեգրման գործընթաց է, որն համարվում է

[5] Ափոյան Ա.. է., Դասավանդման մեթոդիկա, 2014թ.

երեխաների և դեռահասների կրթական գործընթացի առանցքային գործիք:

ՀԱՆԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- *Վստահություն*
- *Հանդուրժողականություն*
- *Ինքնագիտակցություն*
- *Պատասխանատվություն*

Ուսուցման կարևոր բաղադրատարրեր են նաև ***անդրադարձը /ռեֆլեքսիան/ և հետադարձ կապը*** , որոնց նպատակն է հետահայաց հիշել, հասկանալ, գիտակցել, իմաստավորել կատարած աշխատանքների տեսակները, եղանակները, խնդիրները, դրանց լուծման ուղիները, ստացված արդյունքները, ձեռքբերումները, եզրահանգումներ անել, սահմանել հետագա աշխատանքի նպատակները, կառուցել սեփական կրթական ուղին:[6]

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Համագործակցային ուսուցման առավելությունները հիմնվում են լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա: Ըստ Ջոնսոնների հաշվարկի՝ անցկացվել է ավելի քան 550 համեմատական հետազոտություն՝ համագործակցային, անհատական և մրցակցային ուսուցման արդյունավետությունը պարզելու համար: Այդ հետազոտությունները ցույց են տվել, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական դասընթացներում:

Հետազոտությունների հիման վրա Ջոնսոնները և Հոլուբեկը առանձնացնում են հետևյալ կարևոր ձեռքբերումները՝

- **անձի զարգացումը և անհատականության ձևավորումը,**
- **շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը,**
- **հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը,**
- **սթրեսի հաղթահարումը:**

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2 - 4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

[6] Բաղդասարյան Ա., Սովորողների գեղարվեստական կրթության մանկավարժական պայմանները միջին և մասնագիտական կրթօջախներում, Երևան, 2004 թ.

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Համագործակցային աշխատանքի դժվարությունն այն է, որ գործ ունենք տարբեր հետաքրքրություններ, անձնային որակներ, բնավորություններ կրող սովորողների հետ, որոնց առանձնահատկությունները կարող են կամ նպաստել, կամ վատթարացնել համագործակցային ուսուցման կազմակերպումը:

Որպես հետազոտության օբյեկտներ՝ ընտրեցի 8-րդ և 7-րդ դասարանները: Դասարանում սովորում են տարբեր կարողունակություններով օժտված աշակերտներ, և կա նրանց ներգրավվածության, փոխհամագործակցության խնդիր: Ընդգրկելով սովորողներին խմբային աշխատանքում՝ փորձեցի հատկապես թույլ ընդունակություններով աշակերտներին մասնակից դարձնել դասին:

Դասի ընթացքին հետևել է նաև դիտարկող ուսուցիչ, որի արձանագրած տվյալները ևս կցվել են հետազոտական աշխատանքիս / տես Հավելված 1 /:

Հետազոտությունս իրականացրի 3 ուսումնական պարապմունքների ընթացքում՝ ‘Հայոց լեզու և Գրականություն’ առարկաներից: Ընտրեցի հաստատուն խմբերի կայուն անդամներով աշխատանքի հետևյալ իրավիճակը՝ համագործակցային աշխատանք նույն թեմայով:

Դասերը պլանավորելիս առաջնորդվել եմ **ԽԻԿ** համակարգի հետևյալ սկզբունքներով՝

- ուսումնական պարապմունքը դարձնել առավել հետաքրքիր, ստեղծել մոտիվացիա՝ նպաստելով սովորողների ներգրավվածությանը դասապրոցեսին **/խթանման փուլ/,**
- ուսուցումը կառուցել առանցքային խնդիրների և դրանց լուծման շուրջ **/իմաստի ընկալման փուլ/,**

- սովորողների ինքնակառավարմամբ նպաստել նրանց կշռադատելու կարողության զարգացմանը **/կշռադատման փուլ/:**

Ելնելով առաջադրված նպատակից՝ առանձնացրել եմ մի քանի կարևոր գործնական քայլեր՝

- ✓ **ուսումնաօժանդակ մի քանի մեթոդների և հնարների կիրառում,**
- ✓ **դասի ընթացքում համապատասխան տեսանյութերի, պաստառների կիրառում,**
- ✓ **դասի ընթացքում ուղղորդող գործողությունների իրականացում,**

8

- ✓ **արդյունքների գնահատման համար հարցաթերթիկների, հայտորոշիչ թեստերի, քարտային աշխատանքների, ինքնագնահատման, փոխադարձ գնահատման կիրառում,**
- ✓ **դասալսումներ և արդյունքների վերլուծություն,**
- ✓ **փորձարարական դասերի վարում,**
- ✓ **ձեռքբերված փաստերի վիճակագրական վերլուծություն** [7]

[7] Միլիտոսյան Լ., Պիպոյան Ս., Պետրոսյան Հ.,Կիրակոսյան Գ./ Թովմասյան Տ., Մասնագիտական մանկավարժություն, Երևան, 2007 թ.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դաս 1: Հետազոտական 1-ին դասս իրականացրի 8-րդ դասարանում, հայոց լեզվի ժամին՝ «Մակբայ» թեման ուսումնասիրելիս /տես Հավելված 2 /:

Դասի տիպը՝ ***Նոր նյութի հաղորդման***, թեման՝ «Մակբայը որպես խոսքի մաս, տեսակները»:

Ուսումնական պարապմունքն իրականացրի ***Խմբային հետազոտություն*** համագործակցային մեթոդով, ընթացքում կիրառեցի ***խմբավորում, զրույց, խմբային աշխատանք, 5-րոպեանոց շարադրություն*** հնարները: Գործածեցի զննական պարագաներ՝ դասագիրք, պաստառ, քարտեր՝ վարժություններով:

Ինքս ձևավորեցի համապատասխան 2 խումբ՝ պահպանելով լավ և թույլ սովորող աշակերտների համամասնությունը: Խմբերին ներկայացրի ուսումնասիրման ենթակա նյութը և բացատրեցի աշխատանքի ընթացքը, ինչպես նաև գնահատման տեսակն ու չափանիշները:

Առաջադրվող նյութը բաժանեցի ավելի փոքր առաջադրանքների, որոնց լուծումները միավորելու արդյունքում էր միայն ամբողջանում խնդրի լուծումը: Յուրաքանչյուր խումբ ստացավ առաջադրանքի իր մասը:

Դասն սկսեցի խմբավորում մեթոդի կիրառմամբ՝ գործածելով T-աձև աղյուսակի հնարը, որը խթանեց սովորողների հետաքրքրասիրությունը: Այն իրականացվեց համագործակցային մեթոդով՝ խմբային աշխատանքով:

Իմաստի ընկալման փուլում զեկույցի միջոցով ներկայացրի դասը: Խմբերին տրվեց նոր թեմային առնչվող հանձնարարություն, նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է այն:

2 խմբային աշխատանքների ամփոփմամբ տրվեց մակբայի սահմանումը:

Մակբայի տեսակները ուսուցանելու համար խմբերին բաժանեցի քարտեր՝ վարժություններով, որոնք ուղղված էին մակբայների տեսակների բացահայտմանը: Խմբավորելով աշխատանքները՝ սովորողները հնչեցրին մակբայների տեսակները:

Կշռադատման փուլում հանձնարարվեց գրել 5 - րոպեանոց շարադրություն՝ ընտրելով իրենց արդեն իսկ ծանոթ մակբայների տեսակներից 5 - ական մակբայ:

Անդրադարձն իրականացրինք փոխադարձ՝ 2 խմբերի՝ միմյանց միջև հարց ու պատասխանի միջոցով:

Գնահատումը կատարվեց աշակերտների կողմից՝ ինքնագնահատման, իսկ իմ կողմից՝ ձևավորող գնահատման միջոցով:

Դաս 2: Հետազոտական 2-րդ ուսումնական պարապմունքս իրականացրի 7-րդ դասարանում, գրականության ժամին՝ Դերենիկ Դեմիրճյանի ‹Ավելորդը›՝ պատմվածքը դասավանդելիս /տես Հավելված 3 /:

Դասի տիպը՝ ***Համակցային դաս***, թեման՝ **‹Դ. Դեմիրճյանի ‹Ավելորդը›՝պատմվածքը /գաղափար պատմվածքի մասին/, պատմվածքի դիպաշարը, կերպարները›**, որին հատկացրի 2 դասաժամ:

1-ին համագործակցային դասն իրականացրի՝ օգտագործելով ***Հարցուպատասխան, Կարճ դասախոսություն, Մտագրոհ, Վենի դիագրամ, Գրական – փորձագիտական խմբակներ, Երեք բանալի և մեկ կողպեք*** մեթոդների և հնարների կիրառությամբ:

Դասն սկսեցի հարցուպատասխանի միջոցով՝ ամփոփելով նախորդ դասանյութը: Նոր նյութի ուսուցումը իրականացրի ***Կարճ դասախոսություն*** մեթոդով:

Որից հետո ***Վենի դիագրամի*** միջոցով վեր հանվեց պատմվածքի և պատմողական ժանրի այլ տեսակների ընդհանրություններն ու տարբերությունները:

Մտագրոհը՝Ավելորդը՝ վերնագրի վերաբերյալ խթանեց աշակերտների ակտիվությունը ստեղծագործության նկատմամբ: Աշակերտները գրատախտակին անկաշկանդ գրեցին իրենց իմացածը, մտքերը, գաղափարները:

Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանվեց 2 գրական խմբի, որոնցից յուրաքանչյուրը անվանակոչվեց ըստ իրենց տրված առաջադրանքների՝

ա/ գրական նյութը լուսաբանող և բառապաշարը հարստացնող

բ/ ցուցադրող և ամփոփող-արձանագրող:

1-ին խմբի հանձնարարությունն էր գտնել մի քանի հիշարժան կամ հետաքրքիր հատվածներ, բարձրաձայն ընթերցել, նշել այդ հատվածների ընտրության պատճառն ու կարևորությունը:

Դուրս գրել նոր, հետքրքիր բառեր, արտահայտություններ, խոսքեր, շփոթեցնող բառեր:

2-րդ խումբը պետք է նկարեր ստեղծագործության վերաբերյալ մի պատկեր, ներկայացներ քննարկման, թե ինչ նկար է ու ինչ կապ ունի նյութի հետ:

Կազմեր ստեղծագործության համառոտագրությունը, ներկայացներ սեղմ շարադրանքով:

Կշռադատման փուլում գործածեցի Երեք բանալի և մեկ կողպեք մեթոդը, որը օգնեց աշակերտներին ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու, իր ընտրությունը հիմնավորելու. տեքստից ընտրվեց ստեղծագործության բովանդակությունը ներկայացնող 3 պարբերություն, որոնք 3

բանալիներն էին: Այնուհետև կազմվեց նախադասություն, որն արտահայտում էր տվյալ տեքստի բովանդակությունը, և որը կողպեքն էր: Կատարվեց անդրադարձ և միավորային գնահատում:

2-րդ դասաժամին կիրառեցի ***Կերպարների պատկերասրահներ*** մեթոդը. Խմբերին հանձնարարեցի առանձնացնել Հաճի աղային /1-ին խումբ / և Սրբունին / 2-րդ խումբ/ բնութագրող բառերը: Այնուհետև կազմվեց կերպարների պատկերասրահներ և բառերով, և առանձին բնութագրող հատվածներով, որոնք օգտագործում են կերպարների արտաքինը և ներքինը բնութագրելիս:

Որպես ամփոփում՝ խմբերը, համագործակցելով միմյանց հետ, կազմեցին կերպարը բնութագրող քարտեզ, որը կերպարին հասկանալու և ճանաչելու միջոց է: Գծված տողերում, գործածելով մինչ այդ դուրս գրված բառերն ու արտահայտությունները, հանձնարարվեց չափազանց սեղմ շարադրանքով ներկայացնել, թե ինչպիսին է կերպարը:

Դասի ավարտին աշակերտները լրացրին դիտարկման քարտեր /տես Հավելված 4/:

Ամփոփիչ միավորային գնահատումն իրականացրի գրավոր /հարցաշար / աշխատանքի միջոցով, որի արդյունքներն ինձ գոհացրին:

Տվյալների մշակում և վերլուծություն

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ տարաբնույթ խմբային աշխատանքների կազմակերպումը համագործակցային մեթոդի միջոցով հետաքրքրություն է առաջացնում ընթերցանության, ուսումնասիրվող նյութի

նկատմամբ, խթան է հանդիսանում սովորողների ակտիվության, հետաքրքրասիրության համար, զարգացնում ինքնաճանաչողական, սովորել սովորելու կարողունակությունները, արժևորում յուրաքանչյուրի մասնակցային գործունեությունը. սա նոր կացութաձև էր դասարաններում, որը տարբերվում էր արդեն ավանդական դարձած անհատական ուսուցման ձևերից:

Խմբային աշխատանքի ժամանակ, երբ թույլ սովորող աշակերտին և ուժեղ կամ միջին սովորողին ընդգրկում ես միևնույն խմբում, թույլերն իրենց հույսը դնում են լավ սովորողների վրա: Իսկ համագործակցային ուսուցման ժամանակ կատարվում է աշխատանքի բաժանում, որն էլ նպաստում է խմբի՝ հատկապես ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ակտիվությանը / տես Դիագրամ 1 /:

Դիագրամ 1



Իմ ուշադրությունը գրավեց և միաժամանակ ուրախացրեց հատկապես այն հարգանքի և փոխվստահության մթնոլորտը, որն ինքնաբուխ ստեղծվեց

աշխատանքների իրականացման ընթացքում, համատեղ աշխատելու՝ աշակերտների ոգևորվածությունը:

7-րդ դասարանում իրականացված հետազոտական դասի 2 -րդ փուլում պասիվ աշակերտների ներգրավվածությունն ավելի ակնառու էր. հավանաբար աշակերտներն արդեն ծանոթ էին մեթոդին հատուկ իրավիճակներին: Սովորողներն ամբողջ դասապրոցեսն անցկացրին ինքնակառավարման միջոցով, և իմ մասնակցությունը գրեթե չկար: Նյութի ընկալումն իրականացվեց առանց իմ կողմից ակտիվ ուղղորդման / տես Դիագրամ 2 / :

Դիագրամ 2

Տվյալների մշակում 7-րդ դասարանում

Սովորողների ակտիվության հետազոտական ընթացքը



Հետազոտության ընթացքում գնահատեցի նաև սովորողների ստեղծարարության մակարդակը /տես դիագրամ 3 /:

Դիագրամ 3



Վերջնարդյունքում, իհարկե, հաջողությունների հետ մեկտեղ կային և թերություններ:

Մեթոդիկայի կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրները: Աշխատանքի մեկնարկից հետո հիմնական դժվարությունները կապված էին աշակերտների ձևակերպումների հետ: Կշռադատման փուլում ուղղորդված հարցադրումների միջոցով փորձում էի շտկել այդ թերացումը. հարցուպատասխանի ժամանակ նրանք առավել ակտիվություն էին ցուցաբերում:

Թերություններից էին նաև, որ երբեմն ժամանակի մեջ չէինք տեղավորվում, իսկ խմբերը, ոչ համասեռ լինելու իրողությամբ պայմանավորված, հավասար պայմաններ չունեին:

Դիտարկեցի նաև, որ կարելի է ուսուցման նույն մեթոդով իրականացնել ոչ միայն հաստատուն, այլ նաև փոփոխական անդամներով համագործակցային դաս:

Ամփոփելու և եզրահանգումներ իրականացնելու համար հետազոտության վերջում կատարեցինք ինքնաանդրադարձ, որն աշակերտներից յուրաքանչյուրին հնարավորություն տվեց ներկայացնելու ստացած տպավորությունները և ամփոփելու դրանք ելքի քարտերի մեջ:

Հարկ է նշել, որ աշակերտների և ուսուցչի կարծիքներն ու դիտարկումները տվյալ մեթոդի վերաբերյալ գրեթե համընկնում էին:

Ամփոփում

Ամփոփելով իմ հետազոտական աշխատանքի արդյունքները՝ կարող եմ վստահաբար ասել, որ համագործակցային մեթոդը, չնայած իր մասնակի թերություններին, արդյունավետ միջոց է դասը հետաքրքիր և բովանդակային կազմակերպելու համար: Այն հնարավորություն է ստեղծում գործածելու ուսուցման ակտիվ մեթոդներ և հնարներ, խթանում է թույլ սովորողների ներգրավվածությունը դասին, նպաստում է մի կողմից՝ համագործակցային, մյուս կողմից էլ մրցակցային հարաբերությունների դրսևորմանը դասարանում: Աշակերտները ձեռք են բերում հանդուրժելու, միմյանց հարգելու, լսելու, տարբեր կարծիքներ ընդունելու, միմյանց գնահատելու կարողություններ, որը ձևավորում և զարգացնում է նրանց արժեքային համակարգը: Համոզվեցի նաև, որ իմ աշակերտներն ունեն վերլուծելու, ստեղծագործելու, կապակցված խոսք կառուցելու, վստահ արտահայտվելու հատկություններ, պարզապես պետք է օգնել նրանց բացահայտելու սեփական հնարավորությունները :

Համարում եմ, որ իմ հետազոտական աշխատանքի ժամանակ իրականացրած բոլոր դասերը հասան իրենց տրամաբանական ավարտին:

Գրականություն

1. Բաղդասարյան Ա., Մանկավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 2, 2017

2. Կարինե Բաբայան, Մանակավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 1, 2016

3. Միլիտոսյան Լ, Պիպոյան Ս., Պետրոսյան Հ.,Կիրակոսյան Գ./ Թովմասյան Տ., Մասնագիտական մանկավարժություն, Երևան, 2007

4. Բաղդասարյան Ա., Սովորողների գեղարվեստական կրթության մանկավարժական պայմանները միջին և մասնագիտական կրթօջախներում, Երևան, 2004

5. Ջոն Դյուի, Դպիր, Դպրոցը և հասարակությունը, 1-9 համարներ

6. Հայագիտությունը դպրոցում, թիվ 2, 2013

7. Հովհաննիսյան Ա., Բաղդասարյան Ա., Մարկոսյան Ա., Աշխարհագրություն, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր, Երևան, 2007

8. Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանակավարժություն, Երևան, 2008

Հավելված 2

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

՝09՞ սեպտեմբեր՝ 2022թ.

Առարկան՝ **հայոց լեզու**

Դասարանը՝ **8-րդ**

Ուսուցիչ՝ **Լուսինե Սարդարյան**

Դասի թեման՝ **Մակբայ, նրա տեսակները, էջ 14-15**

Դասի տիպը՝ **նոր նյութի հաղորդման**

Դասի նպատակները.

ա/ ակադեմիական՝

- բացատրել մակբայի արտահայտած ընդհանուր իմաստը
- ներկայացնել մակբայի ձևաբանական առանձնահատկությունները, տեսակները
- բացատրել մակբայների կազմությունը
- ձևավորել մակբայներն անսխալ գրելու հմտություններ
- ընկալել տալ մակբայների շարահյուսական դերը

բ/ սոցիալական՝

- ձևավորել լեզվական գրագիտություն
- գրավոր խոսքում ճիշտ կիրառել մակբայները
- ձևավորել համագործակցային ճիշտ հաղորդակցում

Վերջնարդյունքներ. ***պետք է կարողանա՝***

- խոսքի մեջ զանազանել մակբայների խոսքիմասային պատկանելությունը
- խոսքի մեջ ճանաչել մակբայների տեսակները
- գտնել մակբայները, որոշել՝ գործողության ինչ հատկանիշ են ցույց տալիս
- տարբերակել մակբայակերտ ածանցները
- ճիշտ գրել մակբայները խոսքում
- արժևորել մակբայների կիրառությունը խոսքի մեջ

Մեթոդներ՝ T-աձև աղյուսակ, խմբավորում, զրույց, խմբային աշխատանք, 5-րոպեանոց շարադրանք

Ձևական պարագաներ՝ գրատախտակ,դասագիրք, պաստառ, քարտեր՝ վարժություններով

Տվյալ դասի չափորոշչային նվազագույն պահանջները՝

- Ի՞նչ են կոչվում գործողության տեղ, ձև, ժամանակ, չափ ու քանակ ցույց տվող բառերը
- Մակբայները կարո՞ղ են թեքվել
- Քանի՞ տեսակի են լինում մակբայները
- Մակբայները կիրառել խոսքում

Հիմնական հասկացություններ՝

- <u>ձևաբանություն</u>
- <u>բանավոր և գրավոր հաղորդակցում</u>
- <u>լեզվական համակարգ</u>
- <u>ստեղծարարություն</u>

Ներառարկայական կապ՝ գրականություն

Դասի ընթացքը՝

Ներածություն. Մուտք, հաճախումներ, կահավորում, տեղաբաշխում, հիգիենա-1-2 րոպե

Խթանման փուլ / 8 րոպե /

T-աձև աղյուսակի միջոցով խթանել աշակերտների մոտիվացիան՝ հաղորդվող նյութի նկատմամբ

Իմաստի ընկալում / 20 րոպե /

- ✓ Զրույցի միջոցով ներկայացնել դասը, աշակերտները կատարում են առաջադրանքը:
- ✓ Դասարանը բաժանվում է խմբերի, տրվում են քարտեր՝ վարժություններով:
- ✓ Խմբավորում են, ամփոփում աշխատանքը ու ստանում սյունակ՝ խմբավորելով նաև նախկին առաջադրանքում նշված մակբայները:
- ✓ Ներկայացվում են մակբայների տեսակները:

Կշռադատում /10 րոպե /

- ✓ Հանձնարարվում է գրել 5-րոպեանոց շարադրանք՝ ընտրելով աղյուսակից 5-ական մակբայ:
- ✓ Կարդում են և ամփոփում հանձնարարությունները:
- ✓ Ինքնագնահատում
- ✓ Գնահատում՝ ձևավորող

Անդրադարձ/ Տնային աշխատանք / 5 րոպե /

- ➢ **Դասը՝ պատմել**
- ➢ **Վարժ /Վ/ ա,բ**
- ➢ **ակի-** ածանցով կազմել մակբայներ և ածականներ

Հավելված 3

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

՝22՞ սեպտեմբեր՝ 2022թ.

Առարկան՝ **գրականություն**

Դասարանը՝ **7-րդ**

Ուսուցիչ՝ **Լուսինե Սարդարյան**

Դասի թեման՝**Դ. Դեմիրճյանի ՝Ավելորդը՝ պատմվածքը /գաղափար պատմվածքի մասին/, պատմվածքի դիպաշարը,կերպարները , էջ 27-45**

Դասի տիպը՝ ***համակցված***

Դասի նպատակները.

ա/ ակադեմիական՝

- ներկայացնել նկարագրված գործողությունների կատարման ժամանակաշրջանը և վայրը
- ձևավորել տեքստի հիմնական ասելիքն առանձնացնելու կարողություն
- վերարտադրել ստեղծագործությունը

- բացահայտել հիմնական գաղափարը
- բնութագրել հերոսներին
- զարգացնել և հարստացնել բառապաշարը նոր բառերով

բ/ սոցիալական՝

- ձևավորել արժեքային համակարգ
- խթանել քննադատական մտածողությունը
- զարգացնել սեփական տեսակետը ներկայացնելու և հիմնավորելու կարողությունը
- զարգացնել բանավոր խոսքի հաղորդակցման հմտությունը
- նպաստել համագործակցային աշխատանքի կազմակերպմանը

Վերջնարդյունքներ. ***պետք է կարողանա՝***

- նշել պատմվածքի առանձնահատկությունները
- ներկայացնել ստեղծագործության հիմնական դրվագները
- հասկանալ հիմնական գաղափարը
- վերլուծել հերոսների վարքագիծը
- ներկայացնել Առաջին համաշխարհային պատերազմը և ցույց տալ նրա անդրադարձը հայ ժողովրդի վրա
- հիմնավորել սեփական տեսակետը
- հիմնավորել վերնագրի և դիպաշարի համապատասխանությունը

Մեթոդներ՝ Կարճ դասախոսություն, Վենի դիագրամ, Գրական խմբակ/հնար/

Զննական պարագաներ՝ դասագիրք, քարտեր, նշագրիչներ, թղթեր

Տվյալ դասի չափորոշչային նվազագույն պահանջները՝

- Ովքե՞ր են ՝Ավելորդը՝ պատմվածքի գլխավոր և երկրորդական հերոսները
- Որտե՞ղ էին կատարվում պատմվածքի գործողությունները
- Ո՞ր պատմական ժամանակաշրջանի դեպքերն են նկարագրված պատմվածքում
- Քաղաքից փախչելիս Հաճի աղան ընտանիքի անդամներից ո՞ւմ չտարավ իր հետ
- Զղջա՞ց արդյոք Հաճի աղան
- Ո՞վ է ավելորդը և ինչո՞ւ

Հիմնական հասկացություններ՝

- մտածողություն
- վերլուծություն
- հոգեբանություն
- կապակցված խոսք

Միջառարկայական կապը՝

- ✓ հայոց լեզու /ներառարկայական/
- ✓ արվեստ /նկարչություն/
- ✓ պատմություն
- ✓ հասարակագիտություն

Դասի ընթացքը

Ներածություն. Մուտք, հաճախումներ, կահավորում, տեղաբաշխում, հիգիենա-1-2 րոպե

Խթանման փուլ / 8 րոպե /

- Հարցուպատասխանի միջոցով ամփոփել նախորդ դասանյութը.

1/ Բնութագրել Դեմիրճյանին որպես գրող:

2/ Գրական ի՞նչ տեսակներով է ստեղծագործել գրողը:

3/ Թվարկել նրա հիմնական գեղարվեստական գործերը:

- Կարճ դասախոսության միջոցով ներկայացնել պատմվածքի առանձնահատկությունները
- Վենի դիագրամի միջոցով ներկայացնել պատմվածքի և պատմողական ժանրի այլ տեսակների ընդհանրություններն ու տարբերությունները:
- Մտագրոհի մեթոդով խթանել սովորողների հետաքրքրասիրությունը՝ ՝ավելորդ՝ բառի շուրջ:

Իմաստի ընկալում / 20 րոպե /

- ✓ Խմբերին բաժանել ՝Գրական խմբակ՝ վերնագրով թերթիկներ՝ լրացնելու և ներկայացնելու համար:
- ✓ Գրական նյութը լուսաբանող և բառապաշարը հարստացնող ցուցադրող և ամփոփող-արձանագրող խմբերը կատարում են իրենց տրված հանձնարարությունները
  - ✓ Խմբավորում են իրենց աշխատանքները և ամփոփ ներկայացնում
  - ✓ Խմբերը կազմում են ստեղծագործության համառոտագրությունը, ներկայացնում սեղմ շարադրանքով

Կշռադատում /10 րոպե /

- ✓ Հանձնարարվում է **Երեք բանալի և մեկ կողպեք մեթոդով** տեքստից ընտրել ստեղծագործության բովանդակությունը ներկայացնող 3 պարբերություն, որոնք 3 բանալիներն էին: Այնուհետև կազմվեց նախադասություն, որն արտահայտում էր տվյալ տեքստի բովանդակությունը:
- ✓ Կատարվում է անդրադարձ՝ քարտերի միջոցով, որոնք պարունակում են հետևյալ հարցերը.
  1. Ո՞ր առաջադրանքն էր բարդ:

2. Ի՞նչը կարող էիք ավելի լավ անել, սակայն չկարողացաք:
3. Արդյոք նյութը գիտակցո՞ւմ եք յուրացրիք:
4. Ի՞նչ անհասկանալի հարցեր մնացին:
5. Հետաքրքի՞ր աշխատանք էր, թե ոչ: Հիմնավորել:
6. Ինքնագնահատում
7. Գնահատումը՝ միավորային
8. Տնային աշխատանք՝ դուրս գրել կերպարներին բնութագրող հատվածները,վերլուծական շարադրանք՝Ինչո՞ւ է Հաճի աղան գնում եկեղեցի՝ վերնագրով:

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

Մասնակցությունս դասին	
Համագործակցությունս	
Ակտիվությունս	
Դասի ընկալումս	

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ուսուցիչ-դիտորդի անկետավորման թերթիկ

Ուսուցիչ- դիտորդ՝ __Հովհաննիսյան Թամարա, մ/մ նախագահ

Աշակերտների ներգրավվածությունը բնութագրող անկետավորման թերթիկ

Ամսաթիվ	Դաս /դասարան	Որքա՞ն աշակերտ ցուցաբերեց ակտիվություն	Որքա՞նը պատասխանեցին հարցերին	Որքա՞ն աշակերտ էր անտարբեր
09.09.2022	1 / 8-րդ	6/5	6/4	6/1
27.09.2022	2 / 7-րդ	4/3	4/3	4/1
29.09.2022	3 / 7-րդ	4/4	4/4	0

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Դասի ավարտին սովորողների կողմից լրացված դիտարկման քարտի օրինակ

Դասի թեման հետաքրքի՞ր էր	Այո	Ոչ	Այլ պատասխան
Պատասխանել եմ թեմայի վերաբերյալ հարցերին			
Համագործակցել եմ ընկերներիս հետ			
Յուրացրել եմ դասը			

Դասալսողի դիտարկումները

Անուն, ազգանուն_____

Ամսաթիվ_____

Դասարանը _____

Դասի թեման_____

Սովորողի ներգրավվածությանը բնորոշ վարքագիծ	**Աշակերտների թիվը**
Ցուցաբերում է ակտիվություն	
Մասնակցում է դասին	
Հետևում է դասին	
Հետևում է դասընկերների աշխատանքին	
Կատարում է գրառումներ	
Պատասխանում է հարցերին	
Հարցեր է տալիս	
Ցուցաբերում է անտարբերություն	
Այլ վարքագիծ	

ընթացքում կիրառեցի խմբավորում, զրույց, խմբային աշխատանք, 5-րոպեանոց շարադրություն հնարները: Գործածեցի զննական պարագաներ՝ դասագիրք, պաստառ, քարտեր՝ վարժություններով:

Ինքս ձևավորեցի համապատասխան 2 խումբ՝ պահպանելով լավ և թույլ սովորող աշակերտների համամասնությունը: Խմբերին ներկայացրի ուսումնասիրման ենթակա նյութը և բացատրեցի աշխատանքի ընթացքը, ինչպես նաև գնահատման տեսակն ու չափանիշները:

Առաջադրվող նյութը բաժանեցի ավելի փոքր առաջադրանքների, որոնց լուծումները միավորելու արդյունքում է միայն ամբողջանում խնդրի լուծումը: Յուրաքանչյուր խումբ ստացավ առաջադրանքի իր մասը:

Դասն սկսեցի խմբավորում մեթոդի կիրառմամբ՝ գործածելով T-աձև աղյուսակի հնարը, որը խթանեց սովորողների հետաքրքրասիրությունը: Այն իրականացվեց համագործակցային մեթոդով՝ խմբային աշխատանքով:

Իմաստի ընկալման փուլում զեկույցի միջոցով ներկայացրի դասը: Խմբերին տրվեց նոր թեմային առնչվող հանձնարարություն, նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է այն:

2 խմբային աշխատանքների ամփոփմամբ տրվեց մակբայի սահմանումը:

Մակբայի տեսակները ուսուցանելու համար խմբերին բաժանեցի քարտեր՝ վարժություններով, որոնք ուղղված էին մակբայների տեսակների բացահայտմանը: Խմբավորելով աշխատանքները՝ սովորողները հնչեցրին մակբայների տեսակները:

Կշռադատման փուլում հանձնարարվեց գրել 5-րոպեանոց շարադրություն՝ ընտրելով իրենց արդեն իսկ ծանոթ մակբայների տեսակներից 5-ական մակբայ:

Անդրադարձն իրականացրինք փոխադարձ՝ 2 խմբերի միմյանց միջև հարց ու պատասխանի միջոցով:

Գնահատումը կատարվեց աշակերտների կողմից՝ ինքնագնահատման, իսկ իմ կողմից՝ ձևավորող գնահատման միջոցով: